ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/64

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վահագն Մկրտչյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, առանցքակալների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 14.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին 1-ին, 3-րդ, 6-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ և 21-րդ չափաբաժինների մասով չեղարկելու գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 11.04.2022թ.-ին:

Բողոքբեր քննող անձի 13.04.2022թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/6482-2022 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 14.04.2022թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

14.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/64 համարի ծածկագիրը:

27.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

2. **<u>«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն 14.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, (այսուհետ՝ Պատվիրատու) գնահատող հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 1 որոշմամբ նախաձեռնել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22 ծածկագրով առանցքակալների գնման ընթացակարգ, որի համար հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված է եղել 21/12/2021 11:00-ը և որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Էներջի Գրուպ» ՍՊԸ ընկերությունը 1-3, 6-9, 11¬12, 14, 18-21 չաւիաբաժինների համար, ընդ որում 1-3, 12, 14, 19 և 21 համար ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ, որոնցից 2 և 19 չափաբաժիեների համար առաջարկը բարձր է եղել նախահաշվային գնից:

Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստին, ըստ հանձնաժողովի 21-28.12.2021թ. թիվ 3 արձանագրության, «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի մեջ եղել են անհամապատասխանություններ, մասնավորապես նշվել է, որ թիվ 6, 11, 12 չաւիաբաժնների համար ներկայացված (KM) ինչպես նաև 9, 20, 21 չափաբաժինների

համար ներկայացված (Н) մակնշումները չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է հանձնաժողովի գնահատող հանձնաժողովի արձանագրության հետ: ՍՊԶ-4 (ООО «Самарский подшипниковый завод - 4») 10 ԳՊԶ (ООО «Деасятый подшипниковый завод»), ԳՊՋ (ООО Главный подшипниковый завод) և ՎՊ Գրուպ (ООО Волга Подшипник) տեխնիկական բաժինների հետ խորհրդակցելուց հետո որոշում է ընդունվել շտկել հանձնաժողովի կողմից ներկայացված անհամապատասխանությունները մասնավորապես առանցկակալների մակնիշների անվանումներից հանելով «КМ» և «Н» պայմանական նշանակումները, քանի որ արտադրողի կողմից մեզ առաջարկվել է ձեռք բերել պահեստում առկա խմբաքանակից, առանց «КМ» և «Н» պայմանական նշանակումների, միաժամանակ տեղեկացնելով, որ այժմ առանցքակալներն արտադրվում են բացառապես պայմանական նշանակումներով, համաձայն ԳՕՍ 3189-ի: Գնային առաջարկը արտաղյտղի կողմից մեզ տրվել է 30 օր ժամկետով առանցքակալների պահանջվող քանակը գրանցելով ռեզերվում:

Արտադրող գործարանների ներկայացուցիչների հետ խորհրդակցության արդյունքում պարզվել է նաև, որ Պատվիրատուի կողմից ներկայացված ստանդարտները (ԳՕՍ-երը) այժմ ներառված են մեկ ընդհանուր ստանդարտի՝ ԳՕՍ 520-2011-ի մեջ: ԳՕՍ 520-2011-ը այս պահին գործող ստանդարտ է և հաստատված է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից: Տեղեկացել ենք նաև, որ ԳՕՍ-երով նորմավորվում են միայն կառուցվածքային առանձնահատկությունները և չափերը: Սակայն, կարևոր հանգույցներում կիրառվող առանցքակալների ընտրության համար էական նշանակություն ունեն նրանց դինամիկ և ստատիկ բեռնվածությունների սահմանները, առավելագույն թույլատրելի պտուտաթվերը, ռեսուրսները, յուղման, բարակների (зазоры) և երեսակների (фаски) առանձնահատկությունները պայմանական (կառուցվածքային) նշանակումները և ճշտության աստիճանները, որոնք ցանկալի է հստակեցնել գնման ժամանակ:

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ը ցանկություն է հայտնել մասնակցելու գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման նիստին, ստացված ինֆորմացիայի քննարկման համար: Նիստին մասնակցել է «Էներջի Գրուպ» ՍՊԸ կողմից լիազորված ներկայացուցիչ Վահագն Մկրտչյանը: Ներկա ե եղել նաև պաասխանաան սաորաբաժաեման ներկայացուցիչները: Քննարկման արդյունքում պատասխանատու ստորաբաժանումների ներկայացուցիչների կողմից նշվել է, որ առանցքակալներն օգտագործվելու են պատասխանատու, կարևոր հանգույցներում և որ տեխնիկական

բնութագրերը կազմվել են համաձայն սարքավորումների տեխնիկական փաստաթղթերի և գծագրերի:

30.12.2022թ-ին «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից բողոքարկման խորհուրդ ներկայացվել է բողոք, որի արդյունքում կասեցվել է գնման ընթացակարգը: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/02 որոշումը «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հրապարակվել է 14.01,2022թ-ին: Իր հերթին Պատվիրատուն նախաձեռնել է «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով: (Հրապարակման ամսաթիվ 12.01.2022թ, ծածկագիր ՍՑ-ՆԳ-2022/11): ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2022/11 որոշումը «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ հրապարակվել է 19.01.2022թ.-ին:

Համաձայն Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 17-25.01.2022թ. թիվ 5 արձանագրության «Սենտրալ» ՍՊԸ- 28/12 ARM բովանդակությունը հաշվի առնելով, ինչպես նաև այն հանգամանքը, որ նշված առանցքակալները ատոմակայանում օգտագործվող առաջնային կարգի սարքերի վրա տեղադրվող ապրանքներ են, որոնք հաճախակի են ստուգման ենթարկվում համաշխարհայի ատոմային վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից, ապահովում են ատոմակայանի անվտանգ աշխատանքը և համաձայն նշված սարքերի տեխնիկական փաստաթղթերի նախագծային շեղումներ թույլատրելի չեն, առաջացել է անհրաժեշտություն ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի 2022թ. հունվարի 22-ի ԳԲՔԱ-ՆԳ-2022/02 որոշման վերաբերյալ Պատվիրատուի ղեկավարին ներկայացնել վերը նշված փաստերը, խնդրելով կասեցնել գնման ընթացակարգը անորոշ ժամկետով համաձայն ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 67-րդ կետի, քանի որ անհրաժեշտություն է առաջացել դիմելու արտադրող գործարաններին առանցքակալների համարժեքությունը ստուգելու համար:

Համաձայն ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 67-րդ կետի՝ Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե

մասնակցի ներկայացրած փվյալների իսկության ստուգման արդյունքում փվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա փվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Մեր կարծիքով ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 67-րդ կետը վերաբերվում է մասնակիցների կողմից ներկայացված մասնակցության իրավունքը հավաստող և որակավորման փաստաթղթերի ստուգմանը, այլ ոչ թե գնման առարկաների համար նրանց կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանության գնահատմանը, քանի որ ընդգրկված է «ԳՆՈՒՍՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ» գլխում (VIII):

Գնման առարկայի բնութագրերը հաստատվում են պատասխանատու ստորաբաժանման կողմից գման գործընթացի կազմակերպման փուլում, գնման հայտի կազմման և հաստատման ժամանակ, ըստ ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 21-րդ մասի 1) կետի ա) ենթակետի: Ընդ որում, համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 1 և 2 կետերի.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է փվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական փվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Ցանկանում ենք առանձնացնել, որ վերը նշված բողոքում և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգում խոսքը գնում է «Սենտրալ» ՍՊԸ կողմից ներկայացրած

բնութագրերի գնահատման մասին 1-7, 9, 11-12, 15, 18-21 չափաբաժինների համար, որտեղ մեր կազմակերպությունը 1-3, 12, 14, 19 և 21 չափաբաժիններով ներկայացրել էր նվազագույն գնային առաջարկ, ընդ որում 2-րդ և 19-րդ չափաբաժիններից բացի, մյուս բոլորի համար գնային առաջարկը եղել է ցածր նախահաշվային գնից:

Նշենք նաև, որ տեղեկագրում բացակայում է Պատվիրատուի արձանագրությունը ընթացակարգն անորոշ ժամկետներով կասեցնելու որոշման մասին: Գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության մեջ ներկայացված է միայն գնահատող հանձնաժողովի որոշումը ընթացակարգն անորոշ ժամկետով կասեցնելու համար Պատվիրատուի ղեկավարին դիմելու անհրաժեշտության մասին:

Գնահատող հանձնաժողովի նիստերն ընթացակարգի հետ կապված վերսկսել են միայն 30.03.2022թ.-ին: Համաձայն 30.03.2022թ թիվ 6 արձանագրության հանձնաժողովը տեղեկացրել է, որ առանցկակալների կիրառման և ընդունման համար հարցումներ է ուղարկել սարքավորումներն արտադրող 4 գործարանների (АО «Украинские энергетические машины», ООО «Сигма.РУ», АО «Сумский завод «Насосэнергомаш» և АО «ЦКБМ»), այդնցից պատասխանել է միայն АО «ЦКБМ»-ը, նշելով, որ մասնակցի կողմից 18 և 19 չափաբաժիններով ներկայացված առանցքակալներն անհրաժեշտ է փորձարկել սարքավորումների վրա, առավելագույն բեռնվածությունների տակ, առանց որի կազմակերպությունը չի կարող եզրակացություն տալ: Նշվել է, որ այդ փորձարկումները հնարավոր չէ կազմակերպել «ՀԱԷԳ» ՓԲԸ ում տեխնիկական միջոցների և մասնագետների բացակայության պատճառով: Գնահատող հանձնաժողովի կողմից վերանայվել է 1-6, 9, 11, 12, 15, 20 և 21 չափաբաժինների համար առաջարկված առանցքակալների տեխնիկական բնութագրերը և արձանագրվել է, որ թիվ 1-5, 9, 20 և 21 չափաբաժիններով առաջարկված առանցքակալները համապատասխանում և բավարարում են հրավերի պահանջներին: 6, 11, 12, 15, 18 և 19 չափաբաժինների համար առաջարկվող առանցքակալները գնահատող հանձնաժողովի կողմից դիտարկվել են հրավերի պահանջներին անհամապատասխան, քանի որ ունեին կառուցվածքային տարբերություններ, ինչը նշանակում է, որ դրանց կիրառումը կբերի նախագծող և արտադրող կազմակերպությունների կողմից հաշվարկված և մշակված նախագծից շեղում, որն իր հերթին բացասական ազդեցություն կունենա սարքավորումների տեխնիկական վիճակի վրա, կբերի էներգաբլոկի հզորության անկման և կստեղծի վթարային իրավիճակ, ինչը ենթադրում է մեծ ֆինանսական կորուստներ, և ծախսեր: Հանձնաժողովը կասեցրել է նիստը և առաջարկել է «Սենտրալ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել շտկում:

Ցանկանում ենք ընդգծել, որ գնահատող հանձնաժողովը որոշումը կայացրել է առանց արտադրող կազմակերպությունների կողմից տրված եզրակացության, քանի որ հարցումներին պատասխանել էր միայն մեկ կազմակերպություն, երկու չափաբաժինների մասով, առանց հստակ եզրակացություն տալու: Այս դեպքում անհասկանալի ենք համարում սարքավորումներն արտադրող կազմակերպություններին դիմելու անհրաժեշտության առաջացման և մոտ երեք ամիս կորցնելու հանգամանքը, եթե գնահատող հանձնաժողովն ուներ հնարավորություն առանց նրանց դիմելու, ընդունել որոշում դեռ հայտերի գնահատման փուլում:

Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 06.04.2022թ. թիվ 8 արձանագրությամբ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ը ճանաչվել է որպես ընտրված մասնակից, և մեզ առաջարկվել է կնքել պայմանագիր 1, 3, 6, 11, 12, 14, 21 չափաբաժինների մասով: Պայմանագիր կնքելու մասին Պատվիրատուի հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 07.04.2022 թ-ին: «Գնումների Մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Համաձայն «Գնումների Մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Համաձայն «Գնումների Մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Հայտերի գնահատման փուլում Պատվիրատուի գործողությունները (անգործությունը) առաջացրել են իրավիճակ, որի հետևանքում անհնար է դարձել գնման առարկաների մատակարարումը, քանի որ հայտերի գնահատման ժամանակահատվածի անհիմն երկարաձգման հետևանքով լրացել է արտադրողի կողմից մեզ տրամադրված ռեզերվային ժամանակահատվածը և գնային առաջարկի ժամկետը: Այս պահին պահանջվող առանցքակալներն արտադրողի պահեստում առկա չեն, իսկ նոր արտադրվող առանցքակալների համար կիրառվում են պայմանական նշանառումներ, որոնք ըստ գնահատող հանձնաժողովի եզրակացության ընդունելի չեն, իսկ գները նոր արտադրվող

տեսականու համար բարձր են արտադրողի կողմից մեզ տրամադրված առաջարկի համեմատ 2, որոշ դեպքերում նույնիսկ 3 անգամ:

Մեր կարծիքով գնման ընթացակարգը տեղի է ունեցել Պտվիրատուի կողմից «Գնումների Մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության 526-ն որոշմամբ սահմանված կարգի ակնհայտ խախտումներով:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, համաձայն «Գնումների Մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և «Գնումների Մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ն կետի, «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ը որոշում է կայացրել բողոքարկելու Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին 1-ին, 3-րդ, 6-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ և 21-րդ չափաբաժինների մասով չեղարկելու գնման ընթացակարգը:

Ի լրումն 14.04.2022թ.-ին ներկայացված բողոքի, «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն 29.04.2022թ.-ին ներկայացված լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ ենք ներկայացնում արտադրող գործարանի հետ նամակագրությունը, համաձայն որի արտադրողին հարցումը կատարել ենք 14.12.2021թ-ին և ստացել ենք գնային առաջարկ (թիվ 260, տրված 14.12.2021թ) նույն օրը: Պատվիրատուի կողմից ահամապատասխանություններ արձանագրելուց հետո 27.12.2022թ ին դիմել ենք արտադրողին պահանջվող և առաջարկվող առանցքակալների համարժեքության պարզաբանման խնդրանքովս ստացել ենք առաջարկ (թիվ 261, տրված 27.12.2021 թ) պատվիրատուի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան 30 օր ժամկետով: Միևնույն ժամանակ առանձին նամակով արտադրողը տեղեկացրել է, որ առաջարկվող առանցքակալները նշված պահանջներով այլևս չեն արտադրվում և տրվելու են պահուստային միջոցներից և 30 օր ռեզերվային ժամկետի լրանալուց հետո առկայությունը չի երաշխավորվում: Նիստերի վերսկսման արձանագրության հրապարակումից հետո, 08.04.2022թ.-ին դիմել ենք արտադրողին խնդրելով թարմացնել գնային առաջարկը այն չափաբաժինների մասով, որոցով պատվիրատուն մեր կազմակերպությանը ճանաչել է որպես ընտրված մասնակից: Ստացել ենք պատասխան, որ առանցքակալներն այլևս առկա չեն և դրված պահանջներին համապատասխան արտադրել հնարավոր չէ: Նոր խմբաքանակն արտադրվում է գործող ստանդարտներին համապատասխան՝ լրացուցիչ պայմանական նշանակումներով և կառուցվածքային փոփոխություններով:

Ցանկանում ենք ևս մեկ անգամ Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ մեր կազմակերպությունը ներկայացրած է եղել նվազագույն գնային առաջարկ 1-3, 12, 14, 19 և 21 չափաբաժինների համար, պահանջվող ժամկետում շտկել է անհամապատասխանությունները և պատրաստ է եղել մատակարարելու: Համակարգի ծրագիրը գնման ընթացակարգը կասեցրել է ամբողջությամբ, այդ թվում նաև այդ չափաբաժինների համար: Ընթացակարգի կասեցումը «Սենտրալ» ՍՊԸ-ի բողոքի հիման վրա, այնուհետև նաև «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացներին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Պատվիրատուի կողմից նախաձեռնած ընթացակարգի հիման վրա պայմանավորված է եղել բացառապես «Սենտրալ» ՍՊԸ կողմից ներկայացված տեխիկական բնութագրերի շուրջ անհամաձայնություններով: Նույն պատճառով է նաև առաջացել անորոշ ժամկետով գնման ընթացակարգը կասեցնելու համար գնահատող հանձնաժողովի կողմից Պատվիրատուի ղեկավարին դիմելու անհրաժեշտությունը, սակայն ընթացակարգը անորոշ ժամկետով կասեցնելու մասին արձանագրություն չի կազմվել և համակարգում չի կցվել որոշումը:

Ըստ էության ընթացակարգի ամբողջությամբ կասեցումները, այդ թվում նաև այն չաւիաբաժինների մասով, որով մեր կազմակերպությունը ներկայացրել է նախահաշվային գնից ցածր գնային առաջարկ, տեղի է ունեցել ոչ մեր մեղավորությամբ, սակայն ինչի հետևանքով հանգեցրել է Պտավիրատուի պահանջներին համապատասխան ապրանքների մատակարարման անհնարինությանը:

Նամակագրությունը, ներկայացված գնայի առաջարկները և նամակը կցվում են:»:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6557-2022 գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 14.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 26.04.2022թ.-ին թիվ 09/386 գրությամբ ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 14.04.2022թ. ներկայացված բողոքին վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և համալսարանի գրավոր դիրքորոշումը:

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը 2, 3, 4, 5 և 6-րդ չափաբաժինների մասով մերժելու իրավական հիմքեր

Ուսումնասիրելով «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված տեղեկատվությունը հայտնում ենք, որ ընկերության կողմից ներկայացված հայտը մերժվել է հիմք ընդունելով հետևյալը՝

1. ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի (զ) պարբերության համաձայն՝ «հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կարգի 50-րդ կետի համաձայն՝ «ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է և ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի»:

«ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի «Հայտը ներկայացնելու կարգը» բաժնի 4.3 կետի համաձայն՝ «մասնակիցը հայտով ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)՝ համակարգի միջոցով: Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, տարբեր ապրանքային նշան ունեցող ապրանքներ»:

Բացի այդ, մասնակցիների կողմից հայտով մեկ ապրանքի համար մեկից ավելի ապրանքային նշան ներկայացնելու վերաբերյալ որոշակի պարզաբանումներ ստանալու նպատակով Համալսարանը գրավոր դիմել էր գնումների ոլորտը կարգավորող լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, որը պատասխան գրությամբ հայտնել է՝ եթե

հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի նաև իր կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ապա դրանք կարող են լինել մեկից ավելին (որոնք ներառվելու էն կնքվելիք պայմանագրի նախագծում), եթե մասնակցի կողմից առաջարկվող՝ տարբեր երկրներում տարբեր արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշանների ունեցող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Կից ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարության պատասխան գրության պատճենը:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի վերոնշյալ նորմերից, ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումից և հրավերով սահմանված պահանջից հետևում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից ապրանքի տեխնիկական բնութագիրը և դրա համար ներկայացված համապատասխան ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները, ինչպես նաև արտադրողի անվանումները պետք է համապատասխանեն տեխնիկական բնութագրին և բնականաբար միմյանց և պետք է գնահատվեն որպես ապրանքի ամբողջական նկարագիր, որը բավարար գնահատված լինելու դեպքում ամբողջությամբ ներառվում է պայմանագրում համակարգի միջոցով:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸի կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնման ընթացակարգին, 1-52-րդ չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն, և ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ 1, 2, 3, 4, 5, 6, 9, 13, 14, 15, 16, 20, 21, 23, 25, 26, 27, 29, 31, 34, 35, 39, 40, 44, 45, 46, 47, 48, 49-րդ չափաբաժինների մասով:

3. «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի նախնական հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- *հայտի դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ,*
- *բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը,*
- *թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 9, 13, 14, 15, 16, 20, 21, 23, 25, 26, 27, 29, 31, 34, 35, 39, 40, 44, 45, 46, 47, 48, 49 չափաբաժինների մասով մասնակցի, ապրանքի ամբողջական նկարագրի համար նախատեսված՝ ֆիրմային անվանում, ապրանքային նշան, մակնիշ,*

արտադրողի անվանում և տեխնիկական բնութագիր դաշտերում լրացված են միայն (+) և (կամ) (-) սիմվոլներ:

4. Գնահատող հանձնաժողովի 2022թ.-ի մարտի 10-ի նիստի արձանագրության 3-րդ կետով հստակ նկարագրվել են հրավերի պահանջների նկատմամբ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտում առկա անհահամապատասխանությունները: Նույն նիստի արձանագրության 5-րդ կետով որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրը այդ մասին տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Կից ներկայացվում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության պատճենը:

5. «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարը 2022թ.-ի մարտի 10-ին, համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության մասին:

6. Սահմանված ժամկետում «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն թիվ 20, 21, 44, 45, 46 և 47-րդ չափաբաժինների ամբողջական նկարագրի մասով ընդհանրապես չի կատարել շտկում:

7. Բողոքի առարկա հանդիսացող 1-ին, 3-6-րդ չափաբաժինների ամբողջական նկարագրերի մասով, «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալը՝

Հ/Հ	Անվանում	Ապրանքային նշան	Ֆիրմային անվանում	Մակնիշ	Արտադրողի անվանում	Տեխնիկական բնութագիր
1	2	3	4	5	6	7
1	Համակարգիչ 1	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung, Lenovo IdeaCentre AIO 3 24ITL6	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	COMPAL,QUANTA COMPUTER, WISTRON,FOX CONN	Բոլոր նշված չափաբաժինների մասով ներկայացվել են հրավերով դրամց համար սահմանված փառացի և բառացի բնութագրերը
3	Դյուրակիր համակարգիչ 1	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung, Lenovo Legion5 15ITH6H	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung, Softline	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung, Softline	COMPAL,QUANTA COMPUTER, WISTRON,FOX CONN	
4	Դյուրակիր համակարգիչ 2	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung, Lenovo IP 3 15ITL05	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	COMPAL,QUANTA COMPUTER, WISTRON,FOX CONN	
5	Դյուրակիր համակարգիչ 3	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung, Lenovo IP L3 15ITL6	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	COMPAL,QUANTA COMPUTER, WISTRON,FOX CONN	
6	Համակարգչային պլանշետ	xiaomi,HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	xiaomi,HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	xiaomi,HP,LENOVO,ASUS ACER,DELL,Samsung	COMPAL,QUANTA COMPUTER, WISTRON,FOX CONN	

Նախ նշեմ, որ հրավերի 1-ին, 3-6-րդ չափաբաժիններով սահմանված համակարգիչները հավաքական համակարգիչներ չեն և արտադրվում են մեկ որևէ համակարգիչ արտադրող ընկերության կողմից:

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 1-ին, 4-6-րդ չափաբաժինների մասով 3-րդ, 4-րդ և 5-րդ սյունյակներում ներկայացվել են մեկից ավելի «ապրանքային նշան», «ֆիրմային անվանում» և «մակնիշ», որոնք համապատասխանում են մինյան և հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին՝ յուրաքանչյուրը իր մասով: Նշված չափաբաժինների մասով 6-րդ սյունյակում ներկայացվել են մեկից ավելի արտադրողի անվանումներ, սակայն դրանք հանդիսանում են ոչ թե ամբողջական համակարգիչ՝ այլ համակարգչային տարբեր պահեստամասեր արտադրող ընկերություններ:

Որպես օրինակ բերեմ մասնակցի կողմից բոլոր նշված չափաբաժինների մասով ներկայացված «Samsung» ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և մակնիշը, որի արտադրող ընկերություններ են ներկայացվել՝ COMPAL, QUANTA COMPUTER, WISTRON, FOXCONN ընկերությունները: Վերոնշյալով պայմանավորված հայտնում եմ, որ «Samsung» ապրանքային նշանով, ֆիրմային անվանումով և մակնիշով բոլոր ապրանքատեսակները ամբողջ աշխարհում արտադրվում են միայն «Samsung» գործարանների կողմից: Նշվածը փաստ է և հաստատվում է պարզ ուսումնասիրության արդյունքում՝ տեղեկատվությունը տեղադրված է Samsung-ի պաշտոնական կայքում:

Ստացվում է, որ եթե մասնակիցը հայտով ներկայացրել է նաև «Samsung» մակնիշի արտադրանք, ապա պայմանագիր կնքելու դեպքում վերջինիս կողմից կարող է մատակարարվել նաև բռենդային «Samsung» մակնիշի համակարգիչ, որը սակայն չի արտադրվել «Samsung» ընկերության կողմից՝ ոչ օրիգինալ համակարգիչ:

Բացի այդ, «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով 3-րդ, 4-րդ և 5-րդ սյունյակներում ներկայացվել են մեկից ավելի «ապրանքային նշան», «ֆիրմային անվանում» և «մակնիշ»՝ այդ թվում նաև

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժինների մասով 3-րդ, 4-րդ և 5-րդ սյունյակներում ներկայացվել է նաև «Softline» անվանումով «ապրանքային նշան», «ֆիրմային անվանում» և «մակնիշ»: Վերոնշյալով պայմանավորված, հայտնում եմ, որ «Softline» ընկերությունը՝ IT լուծումների մատուցող ընկերություն է, որի կողմից ընդհանրապես չեն արտադրվում համակարգիչներ: Նշվածը ևս փաստ է և հաստատվում է պարզ ուսումնասիրության արդյունքում՝ տեղեկատվությունը տեղադրված է Softline-ի պաշտոնական կայքում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համակարգիչների ոլորտում մասնագիտական նեղ ունակություններ ունեցող անդամների կողմից «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին, 3-6-րդ չափաբաժինների մասով մերժվել է հիմք ընդունելով գնումների օրենսդրության պահանջները և վերոնշյալ փաստարկները:

8. ՀՀ ֆինանսների նախարարության՝ լիազորված մարմնի կողմից տրված պարզաբանմանը բողոքաբերը ծանոթ չէ, քանի որ այն տրամադրվել է միայն «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸին՝ որպես պատասխան գրություն:

Բողոքաբերի այն պնդումը, որ լիազորված մարմնի պարզաբանումը վերաբերվում է պայմանագրի նախագծի մշակմանը, չի համապատասխանում իրականությանը, քանի որ այդ պարզաբանումը վերաբերվում է մասնակիցների կողմից մեկից ավելի ապրանքային նշան, ֆիրմային անվանում, մակնիշ և արտադրողի անվանում ներկայացնելու դեպքում՝ վերջիններիս հայտերի գնահատման մեթոդաբանությանը:

9. Բողոքաբերի մեկ այլ պնդում, այն մասին, որ Պատվիրատուն պետք է գնահատեր ապրանքները պայմանագրի կատարման փուլում, հակասում է օրենսդրական պահանջներին և անիմաստ է դարձնում գնահատող հանձնաժողովի ողջ գործունեությունը, քանի որ գնումների օրենսդրության համաձայն գնահատող հանձնաժողովը ձևավորվում է մասնակիցների հայտերը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված նվազագույն պահանջներին գնահատելու համար:

Ստացվում է, որ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն փաստացի բողոքարկել է ընթացակարգի գնահատող հանձնաժողով ձևավորելու փաստը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ակնհայտ է, որ՝

Ցանկացած մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը պարտավոր է մանրամասնորեն ուսումնասիրել հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման՝ ուստի մասնակիցները չեն կարող թելադրել ընթացակարգի հայտերի գնահատման գործընթացը՝ հակառակ գնումների օրենսդրությանը:

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված «փաստերը»՝ ենթադրություններ են, իսկ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատելիս առաջնորդվել է բացառապես գնումների օրենսդրությամբ սահմանված դրույթներով և նույն օրենսդրությամբ պահանջվող մասնագիտական գիտելիքներով:

Գործի քննության համար էական նշանակություն ունեցող այլ փաստեր.

1. «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը նաև 39-րդ չափաբաժնի մասով: Հաըտը մերժվել է մասնակցի նմանատիպ խախտման համար, սակայն մասնակցի կողմից տվյալ չափաբաժնի մասով ընթացակարգը չի բողոքարկվել:

2. Վերջին մեկ ամսվա ընթացքում թվով չորս պատվիրատուների՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության, Երևանի քաղաքապետարանի, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸի և հայկական ատոմային էլեկտրակայանի կողմից, «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ մասնակցին գնման ընթացակարգերին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով: Բոլոր չորս դեպքերում «Խաչնիք» ՍՊԸ-ի հայտերը մերժվել են՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին անհամապատասխան հայտ ներկայացնելու հիմքով:

3. Գնման ընթացակարգը իրականցվել է էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով, ուստի «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտի մերժման հետևանքով գնման ընթացակարգը այդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած:

Հաշվի առնելով վերոգրյալը և համալսարանի կողմից ներկայացրած փաստական տվյալները խնդրում եմ Ձեզ, «Էներջի Գրուպ» ՍՊ ընկերության բողոքը մերժել:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/64 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից առանցքակալների ձեռքբերման նպատակով 12.13.2022թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգն մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 1-ից 3-րդ, 6-ից 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ և 18-ից 21-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 30.03.2022թ.-ի նիստի թիվ 6-րդ արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը,

ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է 6-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով ծանուցել «Սենտրալ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

iv. Հանձնաժողովի 01.04.2022թ.-ի նիստի թիվ 7-րդ արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 6-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը վերը նշված չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:

v. Արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ 6-րդ, 11-րդ, 12-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից է ճանաչվել «Էներջի Գրուպ» ՍՊԸ:

vi. Արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ՝ որոշել է «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ին և «Սենտրալ» ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

vii. Հանձնաժողովի 06.04.2022թ.-ի նիստի թիվ 8 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն 1-ին, 3-րդ, 6-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

viii. www.gnumner.am կայքում 07.04.2022թ.-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 14.04.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը

գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 2-րդ նեթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հայտերի մերժման դեպքում գնման ընթացակարգի արձանագրությունը պետք է հստակ պարունակի դրանց հիմնավորումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից առանցքակալների ձեռքբերման նպատակով 12.13.2022թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին 1-ից 3-րդ, 6-ից 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ և 18-ից 21-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 30.03.2022թ.-ի նիստի թիվ 6-րդ արձանագրության 3-րդ կետով որոշում է կայացվել 6-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով ծանուցել «Սենտրալ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Հանձնաժողովի 01.04.2022թ.-ի նիստի թիվ 7-րդ արձանագրության 3-րդ կետով որոշում է կայացվել 6-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտը վերը նշված չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել, իսկ նույն արձանագրության 4-

րդ կետով 6-րդ, 11-րդ, 12-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից է ճանաչվել «Էներջի Գրուպ» ՍՊԸ: Հանձնաժողովի 06.04.2022թ.-ի նիստի թիվ 8 արձանագրության 4-րդ կետով «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն 1-ին, 3-րդ, 6-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչով պայմանավորված www.gnumner.am կայքում 07.04.2022թ.-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-1/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Հանձնաժողովը, 06.04.2022թ.-ի նիստի թիվ 8 արձանագրությամբ 1-ին, 3-րդ, 6-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ և 21-րդ չափաբաժինների մասով Ընկերությանը ճանաչելով ընտրված մասնակից, գործել է իրավաչափ՝ պահպանելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 41-րդ, 42-րդ և Հրավերի 8.9-րդ կետերով սահմանված պահանջները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ անհիմն են, իսկ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը 1-ին, 3-րդ, 6-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումն իրավաչափ է, որպիսի պայմաններում ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 14.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/64 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ